

ՄՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՍՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2. ԶՈՐՈՅԱՆ

Արդի ժամանակաշրջանում ՄՄԿԿ վարած տնտեսական քաղաքականությունը ելնում է տնտեսության ու քաղաքականության միասնության լենինյան սկզբունքներից: «Առանց ճիշտ քաղաքական մոտեցման գործին,— նշել է Վ. Ի. Լենինը,— տվյալ դասակարգը չի պահի իր տիրապետությունը և, հետևաբար, չի կարող լուծել նաև իր արտադրական խնդիրները»¹: Այստեղից բխում է լենինյան այն ճշմարտությունը, թե՛ «քաղաքականությունը էկոնոմիկայի խրտացված արտահայտությունն է»²:

Սոցիալիստական արտադրության հիմնական նպատակն է, նշել է Վ. Ի. Լենինը դեռևս կոուսակցության առաջին ծրագրի նախագծի մշակման ժամանակ, «ապահովել հասարակության բոլոր անդամների լիակատար բարեկեցություն և ազատ, համակողմանի զարգացում»³:

ՄՄԿԿ-ն իր տնտեսական քաղաքականությունը մշակելիս հաշվի է առնում սոցիալիստական հասարակարգի զարգացման օրինաչափությունները՝ բնակչության բարեկեցության անշեղ բարելավում, արտադրաուժերի արագ զարգացում, դասակարգերի, սոցիալական շերտերի միջև եղած տարբերությունների աստիճանական վերացում: Միաժամանակ հաշվի են առնվում տրվյալ ժամանակաշրջանի առանձնահատկությունները, երկրի ներքին և արտաքին վիճակը: ՄՄԿԿ XXVI համագումարը նախ և առաջ տվեց արդի ժամանակաշրջանի առանձնահատկությունների խոր վերլուծությունն ու բազմակողմանի բնութագիրը: Մեր ժամանակաշրջանի գլխավոր առանձնահատկությունն ամենից առաջ այն է, որ սովետական մարդկանց անձնվեր աշխատանքի շրջնորհիվ ՍՍՀՄ-ում կառուցվել է զարգացած սոցիալիստական հասարակարգ, որը արտադրաուժերն ու արտադրահարաբերությունները հասցրել է զարգացման այնպիսի բարձր մակարդակի, որ հնարավորություն է ընձեռում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ ստեղծվել են ժողովրդական տնտեսության միանգամայն նոր մասշտաբներ: Նախկինի համեմատությամբ զգալիորեն մեծացել են արտադրության ու սպառման, կապիտալ ներդրումների ու արտադրաֆոնդերի չափերը: Ստեղծվել է տնտեսական վիթխարի հզորություն, որի հիմքը կազմում է բազմաճյուղ ինդուստրիան, սոցիալիստական

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 89:

² Նույն տեղում, էջ 88:

³ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 6, էջ 203:

խոշոր գյուղատնտեսությունը, առաջավոր գիտությունները, որը թույլ է տալիս ՍՍՀՄ-ին յուրաքանչյուր օր արտադրել ավելի քան 4 մլրդ ուտելու հանրային արդյունք⁴:

Ժողովրդական տնտեսության մեջ կատարված քանակական այս փոփոխությունների հետ մեկտեղ կատարվել են նաև արմատական որակական տեղաշարժեր: Բարձրացել է նյութական արտադրության տեխնիկական մակարդակը, բարելավվել նրա կառուցվածքն ու տեղաբաշխումը:

Այս բոլորին զուգընթաց մեր երկրի արտաքին պայմաններում նույնպես կատարվել են լուրջ տեղաշարժեր: Հայն ծավալ է ստացել տնտեսական ինտեգրացումը սոցիալիստական երկրների միջև, որը ՏՓԽ-ի մեջ մտնող բոլոր մասնակից երկրներին ապահովում է գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների առավել արդյունավետ օգտագործում, արտադրության արագ աճ, սոցիալիզմի դիրքերի ամրապնդում՝ կապիտալիզմի հետ տնտեսական մրցակցությունում:

Այդ երկու սիստեմաների միջև եղած տնտեսական մրցակցությունում ծանրության սլաքը հաստատորեն թեքվում է դեպի սոցիալիզմը: Դրա վառ արտահայտությունն է այն, որ եթե 1947 թ. սոցիալիզմի երկրները տալիս էին համաշխարհային արտադրանքի 10 տոկոսը, ապա 1980 թ. այն հասավ 40 տոկոսի⁵, որի կեսը բաժին է ընկնում ՍՍՀՄ-ին՝ 1922 թ. մեկ տոկոսի փոխարեն⁶, Ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարում, այժմ էլ «ՏՓԽ-ի անդամները մնում են որպես աշխարհի երկրների առավել դինամիկ զարգացող խումբը»⁷:

Արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացումը, նրա մասշտաբների մեծացումը, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի դիրքերի ամրապնդումը նախապայմաններ են ստեղծել ՍՍՀՄ-ում տնտեսական զարգացման հարցերը լուծելու կոմպլեքսային ձևով: Եթե նախկինում գոյություն ունեցող սահմանափակ նյութական միջոցները բավարարում էին զլխավորապես լուծելու առաջնահերթ խնդիրները, ապա արդի ժամանակաշրջանում օբյեկտիվ պայմաններ են ստեղծվել գրեթե միաժամանակ լուծելու բոլոր կարևորագույն սոցիալական ու տնտեսական խնդիրները:

Սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը չի կարող գոյություն ունենալ առանց միասնական քաղաքական ղեկավարման, որը իրագործվում է մեկ քաղաքական կենտրոնից: Սոցիալիզմի թշնամիները լավ են հասկանում դա և հենց դրա համար էլ իրենց հարվածն առաջին հերթին ուղղում են կենտրոնական պլանային ղեկավարման դեմ, ընդդեմ մեր կուսակցության գաղափարական քաղաքականության, որն անշեղորեն իրագործում և ղեկավարում է ՍՍՀՄ-ի տնտեսական զարգացումը:

Երբ առաջին անգամ մեր երկրում ընդունվեց զարգացման պլանային սիստեմ, կապիտալիստական աշխարհում այն համարվեց «ուտոպիա»: Սակայն կյանքը ցույց տվեց, որ սոցիալիստական պլանավորման սիստեմը պատ-

⁴ ՏԿՍ «Правда», 1982, 24 мая.

⁵ ՏԿՍ «Ленинская теория социалистической революции и современность». М., 1980, էջ 89:

⁶ ՏԿՍ «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, «Սովետական Հայաստան», 21 փետրվարի, 1982:

⁷ «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Եր., 1981, էջ 10:

վով բռնեց փորձութիւնը և իր հերթին երևան հանեց իր առավելութիւնները կապիտալիստականի նկատմամբ:

ՍՍՀՄ-ում մինչև այժմ իրականացվել են տասը հնգամյակներ, որոնք պատմութեան մեջ մտան որպէս աշխատանքի և սոցիալական առաջընթացի փայլուն օրինակներ: ՍՄԿԿ XXVI համագումարը, ելնելով պատմական այդ փորձից, նշեց, որ ՍՍՀՄ-ը այսուհետև ևս շարունակելու է ընթանալ իրեն լիովին արդարացրած զարգացման պլանային սիստեմով և, հաշվի առնելով արդի ժամանակաշրջանի էական առանձնահատկութիւնները, մշակեց ՍՍՀՄ զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրները:

Նոր հնգամյակը, ինչպէս նախորդները, կենդանի հետաքրքրութիւն առաջացրեց ոչ միայն ՍՍՀՄ-ում, այլև ողջ աշխարհում: Դա շատ օրինալի էր, որովհետև փաստորեն հնգամյա պլանի իրականացումից է կախված սոցիալիստական և կապիտալիստական ուժերի մրցակցութեան հարաբերակցութիւնն ամբողջ աշխարհում:

Տասնմեկերորդ հնգամյակը պետք է կարևոր փուլ հանդիսանա կոմունիզմի ուղիով սովետական հասարակութեան հետագա առաջընթացի, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, երկրի տնտեսական ու պաշտպանական հզորութեան ամրապնդման գործում: «Տասնմեկերորդ հնգամյակի գլխավոր խնդիրն է,— նշված է ՍՄԿԿ XXVI համագումարին Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ,— ապահովել սովետական մարդկանց բարեկեցութեան հետագա աճը ժողովրդական տնտեսութեան հաստատուն, առաջընթաց զարգացման հիման վրա, գիտատեխնիկական առաջադիմութիւնն արագացնելու, էկոնոմիկական զարգացման ինտենսիվ ուղու վրա փոխադրելու, երկրի արտադրական պոտենցիալն ավելի ռացիոնալ օգտագործելու, ռեսուրսների բոլոր տեսակներն ըստ ամենայնի խնայելու և աշխատանքի որակը բարելավելու հիման վրա»⁸:

ՍՍՀՄ-ում կոմունիզմի կառուցումն առանձնապէս բարձրացնում է մեր կուսակցութեան տնտեսական քաղաքականութեան դերը: Միայն մարքս-լենինյան տեսութեամբ զինված կոմունիստական կուսակցութիւնն է ընդունակ ժողովրդական տնտեսութեան զարգացման ճիշտ ճանապարհ ցույց տալու, ինչպէս նաև մատնանշելու սոցիալիստական հասարակարգի զարգացման ուղին:

Այժմ, երբ արտադրութեան զարգացման բարձր մակարդակի են հասել և մեծացել են մեր երկրի պոտենցիալ տնտեսական հնարավորութիւնները, կուսակցութիւնն իր տնտեսական քաղաքականութեան գերազույն նպատակն է համարում՝ բնակչութեան կենսամակարդակի առավել բարձրացումը, որն իր հերթին նպաստում է սոցիալիստական արտադրութեան հետագա վերելքին: Կուսակցութիւնը ելնում է այն բանից, ասված է ՍՄԿԿ XXVI համագումարին տված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ, որ «մարդու նկատմամբ, նրա կարիքների և պահանջմունքների նկատմամբ կոնկրետ հոգատարութիւնը կուսակցութեան տնտեսական քաղաքականութեան սկիզբն է և վերջնակետը»⁹:

Ժամանակակից արտադրութեան աճի արագ տեմպերը պահանջում են ոչ միայն մեքենաներ, տեխնիկա, այլ նաև բանիմաց, բազմակողմանիորեն զարգացած աշխատողներ, որոնց մասնագիտական գիտելիքները, ընդհանուր կու-

⁸ «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 61:

⁹ Նույն տեղում, էջ 80:

տուրան և պրոֆեսիոնալ բարձր պատրաստությունը դառնա աշխատանքի անհրաժեշտ պայման: Սակայն այդ ամենը խոշոր չափով կախված է նրանց կենսամակարդակից, նյութական ու հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանից: Վ. Ի. Լենինը պահանջում էր մշտապես բարելավել մասսաների կյանքի ընդհանուր պայմանները¹⁰:

Ժողովրդի նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման լենինյան կուրսը միշտ եղել և մնում է մեր կուսակցության քաղաքականության և գործունեության բարձրագույն նպատակը: Այդ իսկ պատճառով կուսակցության XXVI համագումարը առաջ քաշեց XI հնգամյակի տարիներին արդյունաբերության առաջին և երկրորդ խմբերի զարգացման տեմպերը մոտեցնելու հարցը: Արտադրության ընդլայնումը և հատկապես ժողովրդական սպառման առարկաների արտադրության առավել արագ աճը հնարավոր կդարձնեն նշանակալի չափերով ավելացնելու բնակչության եկամուտները: XI հնգամյակի տարիներին բանվորների և ծառայողների ամսական նվազագույն աշխատավարձը կկազմի 80 ռուբլի: Է՛լ ավելի կբարձրացվեն արդյունաբերության, տրորանսպորտի և նյութական արտադրության մյուս ճյուղերի աշխատողների միջին վարձատրության կատեգորիաների դրույթներն ու աշխատավարձերը: Հնգամյակի ընթացքում նախատեսված է ընձեռել աշխատավարձի գծով մի շարք արտոնություններ՝ արևելյան առանձին շրջաններում աշխատանքի ստածի համար հավելավճարումներ, փոքրահասակ երեխաների մայրերի համար ոչ լրիվ աշխատանքային օրվա, մինչև մեկ տարին լրանալը երեխային խնամելու համար մասնակիորեն վճարովի արձակուրդ մտցնելը և այլն:

Այդ միջոցառումները նախատեսված են անցկացնել աստիճանաբար, ըստ երկրի շրջանների և տնտեսության ճյուղերի: Այդ բոլորի շնորհիվ այս հնգամյակում բանվորների ու ծառայողների ամսական միջին աշխատավարձը կհասնի 195 ռուբլու, իսկ կուլտնտեսականների աշխատավարձը կաճի 20—22 տոկոսով և ընդհուպ կմոտենա բանվորների ու ծառայողների եկամուտներին¹¹:

Սովետական մարդկանց եկամուտների էական բարձրացման հետ միաժամանակ ներկա հնգամյակում առաջին պլանի վրա է քաշվում բնակչությանը պարենային և արդյունաբերական ապրանքներով, ինչպես նաև նրանց հարաճուն վճարունակ պահանջարկն ապահովելու խնդիրը: ՍՍՇՄ-ում կուտակված արտադրական հսկայական պոտենցիալն այժմ հնարավորություն է տալիս այդ խնդիրների իրականացման նպատակով առավել չափերով զարգացնել արդյունաբերության «Բ» խումբը, որն այս հնգամյակում 1—3 տոկոսով կգերազանցի «Ա» խմբի աճին¹²: Աճի այսպիսի տեմպերը թույլ կտան ապահովելու աշխատավորների բարեկեցության նախատեսված վերելքը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կաճի 13 տոկոսով: Եթե նախկինում ոչ միշտ էր հաջողվում բավարար միջոցներ առանձնացնել ոչ միայն թեթև արդյունաբերության, այլև գյուղատնտեսության վերափոխման համար, ապա XI հնգամյակում այդ ուղղությունների համար նախատեսված միջոցները բավարար չափով աճեցին: Հավանություն տալով կուսակցության այդ գծին՝ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի Նոյեմբերյան (1981) և Մայիսյան (1982) պլենումները միաժամանակ նշեցին գյուղատնտեսության բնագավառում առաջիկա

¹⁰ Տե՛ս Վ. Ի. Լենին, Ծրվեր, հ. 91, էջ 547:

¹¹ Տե՛ս «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 169:

¹² Նույն տեղում, էջ 167:

աշխատանքի գլխավոր ուղղությունները և որոշակի միջոցառումներ մշակեցին նրա հետագա զարգացման ուղղությամբ: Միայն պետական կապիտալ միջոցների ներդրումը գյուղատնտեսության մեջ XI հնգամյակում կանցնի ավելի քան 190 մլրդ ուրուլուց¹³, որը թույլ կտա ավելացնել գյուղատնտեսական այն մթերքների արտադրությունը, որոնց պակասը շոշափելի խափանումներ է առաջացնում մատակարարման գործում: Զարգացնելով բնակչությանը գյուղատնտեսական մթերքներով անխափան մատակարարելու ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումը, ՍՄԿԿ Կենտկոմի Մայիսյան պլենումը քննարկեց և հավանություն տվեց մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի համար ՍՍՀՄ պարենային ծրագրին: Պլենումն առաջին հերթին գլխականորեն հիմնավորեց այն կարևոր տեսական հետևությունը, որ պարենային ծրագիրը հանդիսանում է ՍՄԿԿ տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը և բնորոշում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր ուղղությունը: Պարենային ծրագիրը փաստորեն նոր քայլ է սոցիալիստական տնտեսության պլանավորման և կառավարման մեջ, որը կոչված է ոչ միայն կտրուկ բարձրացնելու գյուղատնտեսությունը, այլև ապահովելու ամբողջ ժողովրդական տնտեսության հետագա առաջընթացը: Իր տնտեսական էությունը պարենային ծրագիրն ընդգրկում է հարցի լուծման կոմպլեքս նպատակային մոտեցում: Նրանում նախատեսվում է սպառողներին՝ պարենային մթերքներով ապահովող տնտեսական բոլոր օղակների սերտ կապ: Սոցիալիստական շինարարության պատմության մեջ առաջին անգամ ագրոարդյունաբերական կոմպլեքսներն առանձնացվում են որպես պլանավորման և կառավարման ինքնուրույն օբյեկտներ: Սկզբունքային նշանակություն ունի ագրոարդյունաբերական կոմպլեքսի առաջավոր օղակի մասին Կենտկոմի Մայիսյան պլենումի որոշումը: Այդպիսի օղակ է սոցիալիստական գյուղատնտեսությունը, որի հիմքը կոլտնտեսություններն ու սովխոզներն են, որտեղ ձևավորվում են պարենային ֆոնդերը, արտադրվում սպառման մթերքների գերակշռող մասը: Այդ պատճառով էլ գյուղատնտեսական արտադրության աճի տեմպերի արագացումը պարենային ծրագրի իրականացման վճռական պայմանն է: Մեր երկրի շահերը պահանջում են, որ պետությունն իր տրամադրության տակ ունենա բավականաչափ սեփական պարենային ռեսուրսներ, հնարավորություն ունենա կրճատելու պարենային մթերքների ներմուծումը կապիտալիստական երկրներից և մեր երկրի բնակչությանը կայուն կերպով մատակարարելու պարենային բազմապիսի մթերքներ: Բնակչության սննդի կալորիականությունը մեր երկիրը վաղուց է գտնվում աշխարհի ամենազարգացած երկրների մակարդակին, սակայն ժամանակակից պայմաններում հրատապ հարց է դարձել սննդի բաղադրության կատարելագործումը ի հաշիվ ավելի նպատակային և բարձրորակ մթերքների՝ մսի, կաթի, ձվի, բանջարեղենի և մրգերի: Ծրագրում նախատեսվում է տասը տարվա ընթացքում զգալիորեն բարձրացնել պարենային մթերքների քանակը և այն հասցնել գիտականորեն հիմնավորված չափանիշներին: Պարենային ծրագրի իրականացման հիմնական պայմանը կուսակցությունը համարում է գյուղատնտեսական և ագրոարդյունաբերական կոմպլեքսների արտադրության էֆեկտիվությունը, նյութական և աշխատանքային ռեսուրսների ինքնարժեքի կրճատումը, ինչպես նաև պլանաչափ անցումը ինտենսիվ գործունեների աճին:

¹³ Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 նոյեմբերի, 1981:

Ժողովրդական սպառման առարկաների արտադրության ընդլայնման, բընակչության եկամուտների աճին համապատասխան, XI հնգամյակում մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը կավելանա 23 տոկոսով¹⁴։ Է՛լ ավելի խոշոր շափերով կաճի բարձրորակ ապրանքների վաճառքը, կընդլայնվի արդյունաբերական ապրանքների ասորտիմենտը։

Այդ բոլոր միջոցառումների հետևանքով, բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները հնգամյակի ընթացքում կաճեն 16—18 տոկոսով¹⁵։

Բնակչության բարեկեցության բարձրացման հարցին միայն սպառողական մոտեցում չպետք է լինի։ Մարդկանց նյութական բարիքների առատությամբ ապահովելը, գիտության, տեխնիկայի ու կուլտուրայի բազմակողմանի բարձրացումը, նյութական արտադրության կատարելագործումը հասարակության առաջադիմության կարևորագույն նախապայմաններն են։

Սոցիալիզմը լայն հնարավորություններ է ստեղծում ռացիոնալ օգտագործելու հասարակության աշխատուժը, որպեսզի ամեն մի աշխատավոր կարողանա աշխատել լրիվ ծանրաբեռնվածությամբ։ Դրան զուգընթաց բոլոր միջոցները գործադրվում են ձեռքի ծանր աշխատանքի, ինչպես նաև շորակավորված աշխատանքի աստիճանական վերացման համար։ Նոր հնգամյակում մեծ ուշադրություն է դարձվում որակյալ մասնագետների պատրաստման գործին։ Միայն պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնարաններում նախատեսվում է պատրաստել 13 մլն որակյալ աշխատողներ¹⁶։

Սոցիալիստական տնտեսության համար օրինաչափություն են ազգային եկամտի աճի բարձր և կայուն տեմպերը։ 1981—1985 թթ. ընթացքում ազգային եկամտի աճը կկազմի 78,5 մլրդ ռուբլի՝ X հնգամյակի 74,5 մլրդ ռուբլու փոխարեն¹⁷։ Միատեմպիկաբար մեծանում են ազգային եկամտի բացարձակ չափերը և դրա աճի յուրաքանչյուր տոկոսի նշանակությունը։ Իսկ ո՞րն է այդ աճի աղբյուրը։ Ազգային եկամուտը ստեղծվում է նյութական արտադրության ոլորտի մարդկանց աշխատանքով, որի մեջ մտնում են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, նյութատեխնիկական մատակարարումն ու առևտուրը։ Որքան շատ աշխատանք կիրառվի այդ բնագավառում և որքան բարձր լինի արտադրողականությունը, այնքան ավելի մեծ կլինի ազգային եկամուտը։

Ազգային եկամտի մեծացման էքստենսիվ գործոնը կախված է աշխատողների թվի աճից և աշխատանքի արտադրողականությունից։ ՍՄԿԿ XXVI համագումարում որպես ազգային եկամտի բարձրացման վճռական գործոն ընդունվեց աշխատանքի արտադրողականության բարձրացումը և դիրեկտիվներում նշվեց, որ հնգամյակում ազգային եկամտի ամբողջ աճի առնվազն 90 տոկոսը ստացվելու է աշխատանքի արտադրողականության բարձրացումից, որը թույլ կտա խնայել 17 մլն մարդու աշխատանք։ Որպես աճի գործոն՝ այն իր մեջ խտացնում, ամփոփում է ժողովրդական տնտեսության ինտենսիվ զարգացման բոլոր կարևորագույն ուղղությունների ազդեցությունը։ Նյութատեխնիկական առաջադիմությունն ու արտադրանքի որակի բարձրացումը, աշխատանքի կազմակերպման կատարելագործումը և աշխատաժամանակի ռացիո-

¹⁴ Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 նոյեմբերի, 1981։

¹⁵ Տե՛ս «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 168։

¹⁶ Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 նոյեմբերի, 1981։

¹⁷ Նույն տեղում։

նալ օգտագործումը՝ այս բոլորը ազգային եկամտի աճի վրա ազդում են հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով:

Համագումարը մեկ անգամ ևս ընդգծեց, որ վճարումն ըստ աշխատանքի շարունակում է մնալ աշխատավորների վարձատրման հիմնական աղբյուրը: «Սոցիալիզմի օրոք բաշխման գլխավոր շափանիշը, — նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարին տրված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ, — կարող է լինել միայն աշխատանքը՝ նրա քանակն ու որակը»¹⁸: Աշխատանքի արտադրողականության հաշվին ընթացիկ հնգամյակում պետք է ստացվի արդյունաբերական արտադրանքի 90, երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների աճի 86 տոկոսը, շինմոնտաժային աշխատանքների և գյուղատնտեսության մեջ արտադրանքի նախատեսվող աճը պետք է ամբողջովին ապահովվի աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին¹⁹: Կապիտալ ներդրումներին տրվում է այնպիսի ուղղություն, որպեսզի գյուղատնտեսության, սննդի, թեթև արդյունաբերության ճյուղերի տեխնիկական հագեցվածության մակարդակը մոտենա ծանր արդյունաբերության տեխնիկական հագեցվածության մակարդակին: Այսպես, օրինակ, եթե արդյունաբերության մեջ կատարվող ամբողջ կապիտալ ներդրումներն ընթացիկ հնգամյակում աճելու են 34 տոկոսով, ապա գյուղատնտեսության մեջ այդ աճը կազմելու է 45, իսկ թեթև արդյունաբերության մեջ՝ 25 տոկոս²⁰:

Ժողովրդական տնտեսության հզոր վերելքը և նրա տարբեր ճյուղերի տեխնիկական մակարդակների աստիճանական համահարթումը նպաստում է քաղաքի ու գյուղի բնակչության և սոցիալական տարբեր շերտերի ու խմբերի եկամտոտների, կյանքի պայմանների մեջ եղած տարբերությունների աստիճանական վերացմանը: Ամփոփելով վերջին տասնամյակներում մեր հասարակության զարգացման փորձը, ՍՄԿԿ XXVI համագումարին տված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ «հասարակության անդասակարգ կառուցվածքի կազմավորումը գլխավորապես և հիմնականում տեղի կունենա հասուն սոցիալիզմի պատմական շրջանակներում»²¹: Սակայն անհրաժեշտ է նշել, որ աշխատողների եկամտոտների աստիճանական հավասարեցումը տնտեսական տեսակետից պետք է հիմնավորված լինի, որի հիմքում պետք է ընկած լինի մարդկանց բազմակողմանի զարգացումը, նրանց մասնագիտական որակավորման և հանրակրթական մակարդակների մերձեցումը, որտեղ վճռական խոսք ունի նաև «այսպես ասած, տերիտորիալ իմաստով սոցիալական տարբերությունների համահարթման անհրաժեշտությունը»²²:

Ժողովրդական սպառման առարկաների արտադրության տեմպերի արագացումն ու ընդլայնումը չի նշանակում, որ ՍՄԿԿ-ն թուլացրել է իր ուշադրությունը ծանր արդյունաբերության զարգացման նկատմամբ: Մանր արդյունաբերությունը եղել և մնում է երկրի տնտեսական հզորության, ժողովրդի բարեկեցության հետագա աճի հիմքը: XI հնգամյակում առանձնակի ուշադրություն է դարձվելու վառելիքա-էներգետիկ ճյուղի զարգացմանը, հատկապես ատոմային և հիդրոէլեկտրակայանների զարգացմանը, որոնք այս հնգամյակում աճելու են ավելի քան 1,7 անգամ և տալու են էլեկտրաէներգիայի

¹⁸ «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 95:

¹⁹ ՏՆ՝ «Սովետական Հայաստան», 18 նոյեմբերի, 1981:

²⁰ Նույն տեղում:

²¹ «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 86:

²² Նույն տեղում, էջ 87:

արտադրութեան աճի ավելի քան 70 տոկոսը²³, XI հնգամյակում էլեկտրաէներգիայի զարգացման մեջ տեղի են ունենալու նաև որոշ արմատական փոփոխութիւններ, որի նպատակն է էլ ավելի արագացնել տեխնիկական առաջադիմութիւնն այդ ասպարեզում: Եթե անցած հնգամյակում ստեղծվեց երկրի միասնական էներգետիկ համակարգ, որն իր մեջ ընդգրկեց ավելի քան 220 մլն բնակչութիւն ունեցող տարածք²⁴, ապա այս հնգամյակում ավարտվելու է կուսակցութեան այդ կուրսը:

Նոր նավթա-գազային խոշորագույն հանքավայրերի յուրացման շնորհիվ նավթի հանույթը հնգամյակի վերջին տարում կհասնի 630 մլն տոննայի, իսկ գազինը՝ 630 մլն խորանարդ մետրի, որը 45 տոկոսով կգերազանցի 1980 թ. մակարդակը²⁵: Նախատեսված է ածխարդյունաբերութեան աճը հնգամյակում ավելացնել 12, սև մետաղներինը՝ 15, քիմիական թելերի թողարկումը՝ 36, պլաստմասսաներինն ու սինթետիկ նյութերինը՝ 68 տոկոսով²⁶:

Հնգամյակի դիրեկտիվներում շեշտակի վերելք է նախատեսվում նաև մետալուրգիայի, մեքենաշինութեան և տրանսպորտի զարգացման ուղղութեամբ: Առանձնապես էներգետիկան և հումքային բազան դեպի Արևելք տեղաշարժելը պահանջում է էլ ավելի զարգացնել և արագացնել ճանապարհների, խողովակաշարերի, օդանավակայանների զարգացումը Սիբիրում և Հեռավոր Արևելքում:

XI հնգամյակում առաջադրված այդ խնդիրները կատարելու համար պահանջվում են նյութական, աշխատանքային և ֆինանսական հսկայական միջոցներ, որոնց գլխավոր աղբյուրը հասարակական արտադրութեան արդյունավետութեան բարձրացումն է, որը հանդիսանում է ՍՄԿ տնտեսական քաղաքականութեան մյուս արմատական հարցերից մեկը:

Տնտեսութեան զարգացման ուղիները երկուսն են՝ էքստենսիվ և ինտենսիվ: Առաջինը պահանջում է լրացուցիչ միջոցներ, այսինքն՝ արտադրական աճը գերազանցապես ապահովել լրացուցիչ կապիտալ ներդրումների և աշխատանքային միջոցների հաշվին: Իսկ ինտենսիվ ուղին, զերծ լինելով այդ միջոցներից, արտադրութեան հետագա աճը հիմնականում դնում է գոյութեան ունեցող միջոցների ավելի արդյունավետ օգտագործման վրա:

Ժողովրդական տնտեսութեան զարգացման էքստենսիվ ուղին ՍՍՀՄ-ում այժմ շատ սահմանափակ է, որովհետև, եթե նախորդ հնգամյակներում աշխատանքային հսկայական ռեզերվներ ունեինք, ապա այժմ ժողովրդական տնտեսութեան մի շարք ճյուղերում արդեն բանվորական ուժի խիստ պակաս է զգացվում: Դրա գլխավոր պատճառը աշխատահասակ սովորողների և կենսաթոշակառուների զգալի աճն է, ինչպես նաև բնակչութեան բնական աճի նվազումը, որը դժվարացնում է արդյունաբերութեան ու շինարարութեան մեջ նոր աշխատուժի ներդրման գործը: Այդ իսկ պատճառով 80-ական թթ. պայմաններում հատուկ նշանակութիւն է ստացել աշխատանքային ռեսուրսների նկատմամբ հոգատար, խնայողական վերաբերմունքը:

Չնայած 1981—1985 թթ. ժողովրդական տնտեսութեան մեջ կապիտալ ներդրումները կհասնեն ավելի քան 700 մլրդ ռուբլու²⁷, սակայն ժողովրդի բա-

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 184:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 182:

²⁵ Տե՛ս «ՍՄԿ XXVI համագումարի նյութերը», էջ 29:

²⁶ Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 նոյեմբերի, 1981:

²⁷ Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 նոյեմբերի, 1981:

րեկեցության և տնտեսական աճի բարձրացման ծրագիրը հաջողությամբ կատարելու համար այնուամենայնիվ անբավարար է այդ ներդրումների նախնական մակարդակը: Դրա համար հարկավոր է յուրաքանչյուր ուրբու դիմաց առավել շահով բարձրացնել կապիտալ ներդրումների արդյունավետությունը, որը կախված է այն բանից, թե որքանով է բարձր նոր գործարկվող արտադրական ձեռնարկությունների տեխնիկական մակարդակը, որքանով են առաջադիմական իրականացվող տեխնիկական լուծումները: Ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարում՝ «էկոնոմիկան պետք է լինի խնայողական՝ այսպիսին է ժամանակի պահանջը»²⁸:

Մեր օրերում հասարակական աշխատանքի արտադրողականությունը գնալով ավելի մեծ շահով է սկսում կախման մեջ գտնվել գիտության ընդհանուր վիճակից, տեխնոլոգիայի զարգացման աստիճանից և արտադրության մեջ գիտության կիրառումից: Հասարակական կյանքի նյութական հիմքը ավելի մեծ շահով դառնում է արտադրողական ուժերի մակարդակը, ուժեր, որոնց մեջ ավելի ու ավելի վճռական նշանակություն է ձեռք բերում գիտությունը, նրա օգտագործումը տեխնոլոգիայում, արտադրության կազմակերպման ու կառավարման մեջ, որակյալ կադրերի պատրաստման գործում և այլն:

Արդի փուլում առաջնային խնդիր է համարվում գիտատեխնիկական առաջընթացի արագացումը, որը բխում է այժմյան գիտատեխնիկական հեղափոխության օբյեկտիվ օրինաչափություններից:

XI հնգամյակում նախատեսված են նաև խնայողության ուժի միջոցառումներ: Մինչև 1985 թ. նախատեսված է ժողովրդական տնտեսության մեջ խնայել 8,5 մլն տոննա սև մետաղների գլանվածք, 50 մլն խորանարդ մետր անտառանյութ, ավելի քան 200 մլն տոննա պայմանական վառելիք և այլն²⁹: Խնայողության ուժի ճիշտ օգտագործման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման շնորհիվ հնգամյակում նախատեսվում է ժողովրդական տնտեսության եկամուտները ավելացնել 40 տոկոսով³⁰:

Պլանային այս հաշվարկները պետք է ամրապնդվեն նյութական առարկաների խնայողության նկատմամբ համաժողովրդական մոտեցումով, վառելիքի և հումքի յուրաքանչյուր կիլոգրամը խնայողաբար օգտագործելով: Դրա համար ղեկավարներ կան ամենուրեք՝ յուրաքանչյուր ձեռնարկությունում ու կոլտնտեսությունում, արտադրությունում ու բրիգադում: Կարևորն այդ ղեկավարների հայտնաբերումն ու օգտագործումն է: Հենց դա էլ կլինի սովետական մարդկանց ավանդը երկրի էկոնոմիկայի զարգացումն արագացնելու, տնտեսական ու սոցիալական առաջադիմությունը մեծացնելու գործում:

Բացի նշված միջոցներից, հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման կարևոր գործոններ են ժողովրդական տնտեսության կառուցվածքի կատարելագործումը, արտադրաֆոնդերի լրիվ օգտագործումը, աշխատանքի միջոցների և աշխատաժամանակի խնայողությունը, կապիտալ շինարարության բարելավումը, օգտակար հանածոների ինտենսիվ օգտագործումը և այլն: Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի արտադրանքի որակի բարձրացմանը, որն ըստ էության հավասարազոր է լրացուցիչ քանակի արտադրանքի թողարկման:

²⁸ «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 67:

²⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 նոյեմբերի, 1981:

³⁰ Նույն տեղում:

Տնտեսություններն ու ձեռնարկություններն առանձնապես հսկայական կորուստներ են ունենում կադրերի հոսունությունից, աշխատանքի ուժի մի խախտումից: Այս թերությունների վերացմանը կարելի է հասնել՝ վերացնելով ամեն տեսակի պարապուրդներն ու աշխատաժամանակի կորուստները, բարելավելով աշխատուժի օգտագործումը և ամրապնդելով աշխատանքային կարգապահությունը: Այստեղ որոշակի խոսք ունի նաև տնտեսական ու բարոյական խրախուսման միջոցների ճիշտ օգտագործումը: ՍՄԿԿ XXVI համագումարը մեկ անգամ ևս ընդգծեց, որ պլանավորման կենտրոնացման հետ միաժամանակ պետք է լայնորեն օգտագործվեն տնտեսական հաշվարկը, շահույթը, վարկը և տնտեսական մյուս լծակներն ու նյութական խթանման ձևերը:

Արդի ժամանակաշրջանի տնտեսական քաղաքականության հանգուցային հարցերից մեկը կառավարման սխտեմի էլ ավելի կատարելագործումն է, որը հենվում է միլիոնավոր սովետական մարդկանց գիտակցական գործունեության վրա: Արդյունաբերության մեջ կառավարման կազմակերպման կառուցվածքի հետագա կատարելագործման կարևոր միջոցառում է տարածքային-արտադրական կոմպլեքսների ստեղծումը և գոյություն ունեցող միավորումների զարգացումը, իսկ գյուղատնտեսության մեջ շարունակվելու է միասնական ագրոարդյունաբերական կոմպլեքս գոյացնող ճյուղերի փոխկապված, հաշվեկշռված զարգացումն ապահովելու աշխատանքը:

ՍՄԿԿ XXVI համագումարը մեկ անգամ ևս պահանջեց զարգացնել տնտեսական ղեկավարման ձևերը, ընդլայնել և լայնորեն օգտագործել կառավարման ժամանակակից կազմակերպական մեթոդները, պարզեցնել և էժանացնել կառավարչական ապարատը:

ՍՄԿԿ կողմից մշակված և առաջադրված տնտեսական քաղաքականության իրականացումը պահանջում է տնտեսական կառավարման գործին մասնակից դարձնել հասարակական կազմակերպություններին, աշխատավորների լայն զանգվածներին, որոնք վստահորեն պայքարի են ելել ՍՄԿԿ XXVI համագումարի կողմից առաջադրված ծրագրի իրականացման համար:

Г. А. ЗОРОЯН — XXVI съезд КПСС о некоторых особенностях экономического развития СССР. — На основе всестороннего анализа материалов XXVI съезда КПСС в статье раскрываются экономическая политика партии в годы 11-й пятилетки, а также особенности экономического развития страны на современном этапе развитого социализма, который, неуклонно совершенствуясь, постепенно перерастает в коммунистический.